

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

1. Հնարավոր տարերային աղետների և տեխնածին վթարների կանխատեսում, դրանց առաջացման նախադրյալների վերծություն և հնարավոր հետևանքների գնահատում:
2. Արտակարգ իրավիճակներում բնակչության բուժսպասարկումն իրականացնելու նպատակով քաղաքացիական պաշտպանության հանրապետական բժշկական ծառայության աշխատանքների պլանավորում:
3. Բնածին և տեխնածին տարբեր աղետների հետևանքով ստեղծված արտակարգ իրավիճակներում բնակչության բուժսպասարկման լիակատար ապահովման նպատակով համապատասխան նախապատրաստական միջոցառումների մշակում և ապահովում՝
4. Այլ աղետների(սողանքներ, հեղեղումներ,փլուզումներ) սպառնալիքի կամ դրանց առաջացման դեպքում բնակչության բուժսպասարկման լիակատար ապահովման նպատակով խաղաղ պայմաններում աղետների բժշկության մասնագիտացված խմբերի, բժշկական կազմավորումների ստեղծում:
5. Վերապատրաստման դասընթացների, սեմինար պարապմունքների և պլանային ուսումնական վարժանքների միջոցով՝ արտակարգ իրավիճակներում գործող բժշկական կազմավորումների մասնագիտական պատրաստականության հետևողական բարձրացում:
6. Աղետների բժշկության կազմակերպման գործում համաշխարհային փորձի ուսումնասիրում և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցում:
7. Սանիտարահակահամճարակային միջոցառումների համակարգում:
8. Հնարավոր աղետների դեպքում առողջապահական համակարգին անհրաժեշտ դեղերի, դոնորական արյան, դրա պատրաստուկների, բժշկական սարքավորքումների, պատավաստանյութերի, մանրէաբանական և ախտորոշիչ պատրաստուկների, բժշկական գույքի և այլ անհրաժեշտ միջոցների նախնական հաշվարկ և կուտակում՝ Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի պետական ռեզերվների գործակալության միջոցով: